

ուղն է: Նրանից կալելի է գուրս բերել շափահաս կենդանին կազմով ողոր ֆակտերը: Այդ ֆակտերի եւրաբանչւթիւն խումբը գուրս է բերուում մի որևէ գերիշխող ֆակտից: Խոկ այս բոլոր գերիշխող ֆակտերը պէտք է գուրս բերուին տիպից: «Այն ժամանակ մեր առաջ կը մնայ միայն մի միակ բանաձեւ, որից հետզհետէ յառաջացող եղանակացութեանց մի ամբողջ համակարգութեան միջով կը բղիսի մնացեալ ֆակտերի ամբողջ կազմակերպեալ բազմութիւնը»:

Երբ այն ինչ որ այսուեղ ցոյց է տուած մի օրինակով, անուի բոլոր շրջաններում և բոլոր դիտութեանց համար—այն եղերքը այն ձևով ինչպէս այժմ մենք նրան ըմբռնում ենք, կը չքանայ, ֆակտերը կը կրծատուին, նոցա տեղերը կը բռնեն բանաձեւը: Եւ նոցա մէջ մենք կը գտնենք տիեզերքի միութիւնը և կը հասկանանք այն՝ ինչ որ նրան ստեղծել է: Խա՝ տիեզերքը՝ առաջացել է միւս ֆակտերի նման՝ ընդհանուր ֆակտից, այն ստեղծադրութող օրէնքից, որից միւնքը բղնում են: Գիտութեան վերջնական նպատակը այդ գերագոյն օրէնքն է և ով կարողանար փոխադրուել նորա խորքերը, նա կը տեսնէր որ նորանից, որպէս գերագոյն աղբիւրից, բղնումէ անցքերի յաւիտենական հոսանքը և երեսոյթների անեղք ծովը: «Եյտեղ մենք զգում ենք, ինչպէս է մեղանում սաղմ առնում բնութեան գաղափարը: Անհրաժեշտ օրէնքների այս համակարգութեան շնորհիւ աշխարհը կազմում է մի անբաժան էակ, երևոյթների բարձր գագթին, ճաճանչափոյլ և անմատչելի եթերքի բարձրութեան վրայ արտասանուումէ յաւիտենական ճշմարտութիւնը և այդ ստեղծադրութիչ բանաձեւի անլուռ արձագանգը իւր անսպառելի ալիքներով կազմումէ տիեզերքի անսահմանութիւնը: Էմենայն ձև, ամենայն փափոխութիւնն, ամենայն շարժումն ամենայն գաղափար մէկն է նորա գործողութիւններից: Խա յարակայ է ամեն բանի մէջ և չէ սահմանափակուած ոչ մի բանով: Կիւթ և միտք, մոլորակ և մարդ, կեանք և մահ, վիշտ և ուրախութիւն, չը կայ ոչինչ, որ նորան չարտայայտէր, և չը կայ ոչինչ որ նորան լրիւ արտայայտէր: Խա լցուումէ ժամանակն ու տարածութիւնը և մնումէ ժամանակից ու տարածութիւնից վեր . . . Ամենայն կեանք նորա վայրկեաններից մէկն է, ամենայն էակ՝ նորա ձեւերից մէկը, և իրերի շարքերը ենում են նորանից՝ անխօրտակելի անհրաժեշտութեան համաձայն: Նորա ոսկէ շղթայի սատուածային օղակներով կապուած: Անտարբեր, անշարժ, յաւիտենական, ամենազօր, ստեղծագործիչ—չը կայ անուն՝ նորան սպառող, և երբ բացումէ նորա պայծառ և միեմ երեսը, չը կայ մարդկային ոգի: որ չը խո-

նարչի զարմանքից և երկիւղից խռուուած: Իսկայ նոյն ակնթարթում այդ ոգին բարձրանուումէ: Նա մոռանումէ իւր մահացութիւնն ու փոքրկութիւնը: Նա վայելումէ համակրութեամբ նրա միտքը պաշարող այդ անսահմանութիւնը և մասնակցումէ նորա մեծութեանը»:

Ե. ՄԱԴԱԹԵԱՆ:

## ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՏԱՑԱԾ ԳՈՒՄԱՐՄԵՐԻ:

Վեհափառ Հայրապետի Ս. Էջմիածին ժամանելուց մինչև այսօր Վեհարանում ստացուած գրամական նուիրաբերութիւնները սոքա են:

Մեծ, Ժամհարեան եղբայրները նուիրեցին 17000 բուրբի անձեռնմխելի, որի տոկոսը պիտի գործադրուի կրթական նպատակով:

Պոսկվայարնակ Սոր-Սահիծեանցի հայերն նուիրեցին . . . . . 3000 ր. — կ. Վարշավարնակ Հայերն . . . . . 400 ։ — ։ Եկատերինողարի Հայերն . . . . . 520 ։ — ։ Վարշավայի Հայերն կրկին . . . . . 490 ։ — ։ Բագրուարնակ Հայերն . . . . . 2200 ։ — ։ Պոսկվայից Ժամհարեան եղբայրներն կրկին . . . . . 2000 ։ — ։

Ուրեմն ընդ ամէնն . . . . . 25,610 բուրբի:

Այս գումարից հանելու է մեծ. Ժամհարեանների կրթական նպատակով նուիրած անձեռնմխելի 17 հազար բուրբի:

Ուստի Վեհ. Հայրապետի անպայման արամագրութեան յանձնելով ստացուած է միայն 8610 բուրբի: Այս գումարից Վեհ. Հայրապետը բարեհածեց 2000 ր. ուղարկել կ. Պոլսի Հայոց Ա. Պատրիարքին սովեալներին հասցնելու: Իսկ մնացեալ գումարից ահա վեց ամիս է, որ առ չը հարիւրաւոր երկու սեափ և ամեն հասակի սոված և մերկ գաղթականներ և տեղական բնակիչներ զիմումնեն Սորին Վեհափառութեան և դրամական ու բարոյական միիթարութիւն ստանալով հեռանուումն Վեհարանից, օրհնելով Հայոց ազգի բարեսէր և եղբայրակը նուիրատուններին: Միենոյն միջոցին, Վեհ. կաթողիկոսի տնօրինութեամբ, կարօտեաներին մասնատրուումէ դրամական օգնութիւն Մայր Աթոռիս գանձապահի միջոցով:

